



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

Արև + Տե

ՊՈՏԱՆԵԿՈՅ ԳՐԱԴԱՐԱՆ

6

ԹԵՎԱՊԻՏԱԿԱՆ ԱԵՐԻ

6

ԵԿԿ. ՍԵՐԳԻԱՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻ
ԶԵՆՔԵՐ

ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ
ԶՐՈՒՅՑՆԵՐ

1927

ՊԵՏԵՐԱՅ-ՅԵՐԵՎԱՆ

591.5

31861

11-25

Արքայանի, Ա.
Համբակ Կենտրոն
354:

ՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԵՂԳԻՏԱՅԱՆ ՍԵՐԻԱ

No 6

ԲՆԱԴՐՅԱԿԱՆ ՍԵՐԻՅ

No. 6


591.5
U-25

ՆԻԿ. ՍԱՐԳՈՅԱՆ

ԶԱՐՄԱՆԱԼԻ ԶԵՆՔԵՐ


ԲՆԱՊԱՏՄԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՑՆԵՐ

A 16158



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՐԱ-1927



Գրառեպվար № 25ր.

հ. 490.

Տիրաժ 3000.

Պետհրատի յերկրորդ տպարան Յեղևանում—374.

ՀՈՏԸ ԻԲՐԵՎ ԶԵՆՔ

Գլուղերում, աղբանոցների մոտերքը հաճախ կարող եք լսել մի տարորինակ ձայն. «հոպ-հոպ», «հոպ-հոպ-հոպ», վոր յերկար կամ կարճ ընդմիջումից հետո կրկնվում ե նույնությամբ. Ո՞վ ե այդ ձայն հանողը? Հոպոպն ե դա. մի խեղճ թռչուն, վոր աղբի մեջ իրեն համար թրթռուներ ու միջատներ ե փնտում:

Հոպոպը մի գեղեցիկ և աղավնուց մի քիչ փոքր թռչուն ե, գույնզգույն փետուրներով, յերկարուկ կտուցով, ուժեղ վոտներով, սիրուն պոչով և փետուրներից կազմված սանրածե մեծ կատարով. Գլուխը ցցած ման ե գալիս նա աղբառատ տեղերում և շարունակ ուշադրությամբ դիտում իր շուրջը. Շարժվածքից յերեսում ե. վոր նա չափանց վախլուկ ե. Յերբ նա վոանգ ե տեսնում, իսկույն պառկում ե, պոչըն ու թևերը փռում գետնին և կտուցը վեր ցցում. Այդ գրության մեջ նմանվում ե նա մի գույնզգույն լաթի. Պարզ ե, վոր այդ բոլորն անում ե նա թշնամիներին աննկատելի գառնալու համար. Յեվ իսկապես, յերբ վոանգն անցնում ե, նա հավաքում ե իր թևերն ու պոչը, կանգնում տեղը և շարունակում նույն ձևով քայլել:



Նկ. 1. Հոպոպ

Հըաշալի միջոց վտանգից ազատվելու համար։
Բայց հոպոպը միշտ այսպես վախլուկ չի լինում։
Յերբ նա թուլք ե նստում և ձվերից ձագուկներ
են դուրս գալիս, նրա վախկոտությունը կարծես անհետանում ե. նա այժմ հասարձակ կերպով դիտում է նույն
իսկ կատվին, իր այդ սարսափելի թշնամուն. Յեզ ինչու
պետք ե վախենա, չե վոր այժմ նա այնպիսի մի զենք
ունի, վորով հեշտությամբ կարող է վախցնել իր թշնա-
միներին. Յեզ իսկապես, յերբ կատուն մոտենում է դեռ
չհասած նրան, իսկույն զլուխը շուռ ե տալիս և հե-
ռանում։

Ինչու. ի՞նչ ե պատահել։

Մի շատ հասարակ բան. նրա մաշկից դուրս ե գա-
լիս այժմ մի հեղուկ, վոր իրենից գարշելի հոտ ե արձա-
կում. Ահա հենց այդ հոտն ե, վոր վախցնում ե նրա թշ-
նամիներին. Նույնպիսի հեղուկ ե դուրս գալիս նաև նրա
ձագերի մաշկից։

Բայց այդ դեռ բավական չե. արտաքինով այդ զե-
ղեցիկ թոշունը մաքրության մասին վոչ մի հասկացողու-
թյուն չունի. թե ինքը և թե իր ձագերն աղբով լցնում են ի-
րենց բունը, այնպես վոր վերջինս դառնում ե մի կատար-
յալ աղբանոց, վոր անասելի գարշահոտություն ե տարա-
ծում իր շուրջը. Ի զուր չե, վոր ժողովուրդը հայնոյող
մարդուն ասում ե, «ի՞նչ ես բերանդ հոպոպի բուն շինել»։

Սակայն անցնում են շաբաթներ և հոպոպի ձագերը
մեծանում են և հեռանում ընից. ահա այդ ժամանակ նը-
րանցից այլևս հոտ չի գալիս. հոտ չի գալիս նաև մայր հո-
պոպից. Նշանակում ե, այդ պաշտպանողական զենքից
ոգտվում են նրանք իրենց կյանքի միայն ամենածանր
շրջանում։

Նման զենքով են պաշտպանվում և ուրիշ շատ կեն-
դանիներ։

Ահա ձեզ մի փոքրիկ, տափակ և բաց-շագանակա-

գույն բղեղ, վոր սովորաբար լինում ե թթենու և մոշի վրա. մնացած բղեղների նման նա ևս ունի յերեք զույգ վոտներ, մի զույգ բողկուկներ և յերկու զույգ թևեր։ Մի վողործելի ու խեղճ բղեղ է նա. սնվում ե ըռւսական հյութով և դրա համար ունի մի կնճիթ, վորի մեջ գըտնը վող խողաններով ծակում ե բույսի կեղել և հյութը ծըծում։ Վտանգից պաշտպանվելու համար ունի նա մի զենք. հենց վոր վտանգ ե ըզգում, անմիջապես իր կըրծքից, յետելի վոտների հիմքերի արանքից, արտադրում ե մի տեսակնյութ, վոր իրենից սարսափելի հոտ ե արձակում. Թութ կամ մոշ ուտելու ժամանակ հաճախ նկատած կլինեք, վոր նրանց մեջ պատահում են այնպիսիները, վորոնցից զզվելի հոտ ե դալիս։ Այդ հոտն առաջանում ե հենց այդ բղեղի արտադրած նյութից։ Այդ հոտից զզվում են վոչ միայն մարդիկ, այլ և միջատակեր կենգանիներից շատերը. և այդ ե պատճառը, վոր նրանք սովորաբար խուսափում են նրան ձեռք տալուց։

Ահա ձեզ և մի այլ բղեղ, վոր կոչվում ե ռմբաձիգ. մի անուն, վոր միանգամայն տեղին ե տրված։ Յեվ իսկապես, այդ բղեղը հենց վոր նկատում ե իր թշնամուն, կանգ ե առնում և իր մարմնի յետելի մասից արձակում ե մի փոքրիկ կաթիլ հեղուկ. այս հեղուկն անմիջապես գոլորշի յե դառնում և առաջ բերում մի փոքրիկ ամպիկ, վոր իրենից զզվելի հոտ ե արձակում։ Սակայն հեղուկը գոլորշի դառնալով՝ առաջ ե բերում մի բավական ուժեղ ճայթյուն, ճիշտ այնպես, ինչպես ոռւմբի մեջ գտնված նյութն արագ կերպով գազ դառնալով՝ առաջ ե բերում պայթյուն։ Նշանակում ե, այդ բղեղի արձակած հեղու-



Նկ 2. Մոշաբղեղ

հյութով և դրա համար ունի մի կնճիթ, վորի մեջ գըտնը վող խողաններով ծակում ե բույսի կեղել և հյութը ծըծում։ Վտանգից պաշտպանվելու համար ունի նա մի զենք. հենց վոր վտանգ ե ըզգում, անմիջապես իր կըրծքից, յետելի վոտների հիմքերի արանքից, արտադրում ե մի տեսակնյութ, վոր իրենից սարսափելի հոտ ե արձակում. Թութ կամ մոշ ուտելու ժամանակ հաճախ նկատած կլինեք, վոր նրանց մեջ պատահում են այնպիսիները, վորոնցից զզվելի հոտ ե դալիս։ Այդ հոտն առաջանում ե հենց այդ բղեղի արտադրած նյութից։ Այդ հոտից զզվում են վոչ միայն մարդիկ, այլ և միջատակեր կենգանիներից շատերը. և այդ ե պատճառը, վոր նրանք սովորաբար խուսափում են նրան ձեռք տալուց։

Նկ 2. Մոշաբղեղ

հյութով և դրա համար ունի մի կնճիթ, վորի մեջ գըտնը վող խողաններով ծակում ե բույսի կեղել և հյութը ծըծում։ Վտանգից պաշտպանվելու համար ունի նա մի զենք. հենց վոր վտանգ ե ըզգում, անմիջապես իր կըրծքից, յետելի վոտների հիմքերից, արտադրում ե մի տեսակնյութ, վոր իրենից սարսափելի հոտ ե արձակում. Թութ կամ մոշ ուտելու ժամանակ հաճախ նկատած կլինեք, վոր նրանց մեջ պատահում են այնպիսիները, վորոնցից զզվելի հոտ ե դալիս։ Այդ հոտն առաջանում ե հենց այդ բղեղի արտադրած նյութից։ Այդ հոտից զզվում են վոչ միայն մարդիկ, այլ և միջատակեր կենգանիներից շատերը. և այդ ե պատճառը, վոր նրանք սովորաբար խուսափում են նրան ձեռք տալուց։

Կի փոքրիկ կաթիլնե-
րը, վոչ այլ ինչ են,
բայց յեթեմի միռում
բեր, վոր նետում ե
նա թշնամիների վրա:
Յեվ այս ռումբերն ի-
րենց ձախով, ողի մեջ
առաջ բերած հարվա-
ծով և մանավանդ հո-
տով վախեցնում են
թշնամուն և փախցը.

Նում: Ուժեղ տպավորություն գործելու համար բզեզն իր
ռումբերն արձակում ե միայն այն ժամանակ, յերբ
թշնամին բավականին սոտ ե գտնվում, դրա համար նա
աշխատում ե ընդունել այնպիսի դիրք, վոր ռուսըն ուղ-
ղված լինի դեպի թշնամին: Այս բոլորը ցույց են տա-
լիս, վոր ի զուր տեղը չե նա ռմբածիդ կոչվում:

Հորտուն, այդ թունազուրկ ոճն ևս իր բազմաթիվ
թշնամիներից ազատվելու համար հաճախ դիմում ե հոտի
ոգնության: Յերբ թշնամին բոնում ե նրան, նա սկսում ե
արտաթորել և նրա արտաթորած հյութերն այնպիսի զըդ-
վելի հոտ են արձակում իրենցից, վոր թշնամին հաճախ
զզվելով բաց ե թողնում նրան և հեռանում:

Հորտուի նման յերկյուղի ազդեցության տակ շատ
կենդանիներ են արտաթորում և այսպիսով ազատվում ի-
րենց թշնամիներից: Փորձեցեք բոնել զանազան տեսակի
կենդանիներ և կտեսնեք, վոր պաշտպանության այդ մի-
ջոցը բավական տարածված ե նրանց մեջ:

Բայց այդ դեռ վոշինչ:

Կան մի շարք կինդանիներ, վորոնք իրենց արձակած
գարշելի հոտի պատճառով կոչվում են «ժանտահոտ»: Դը-
րանք ունեն յերկար մարմին, թավամազ պոչ, մեծ ու ու-
ռուցիկ քիթ, և մորթի, վորի վրա լինում են սպիտակ



Նկ. 3. Ռմբածիդ բզեզներ (ձախ կողմում
բզեզը մեծ դիրքով)

շերտեր ու բծեր: Նրանց գլուխը փոքր ե մարմնի համեմատությամբ, աչքերը պստիկ, բայց արտահայտիչ, ականջները կարճ ու կլորիկ: Վոտքերը կարճ, հնդական մասներով, վորոնք վերջանում են յերկար և փոքր ինչ կորացած ճիրաններով: Այդ կենդանիներն ապրում են ընդհանուրապես գաշտերում, մանավանդ թփոտ տեղերում: Ցերեկները բնում են ժայռերի ճեղքերում, ծառերի փշակներում և կամ իրենց ճիրաններով շինած բներում, իսկ գիշերները դուրս են գալիս կերակուր գտնելու: Ուտում են վորդեր, միջատներ, սողուններ, թռչուններ, ձվեր, փոքրիկ կաթնասուն կենդանիներ, յերբեմն ել արմատներ ու պտուղներ:

Վտանգի ժամանակ այդ կենդանիներն արձակում են իրենցից մի տեսակ հեղուկ, վոր սարսափելի հոտ և արձակում, այնքան սարսափելի, վոր թշնամիները վոչ միայն զզվում են նրանց մոտենալուց, այլ և աշխատում են ինչ-



Նկ. 4. Սկունս

բան կարելի յե շուտ փախչել, հեռանալ նրանցից: Աշխարհում անհնարին ե գտնել մի այնպիսի բան, վոր իր գարշելի հոտով կարողանա մրցել նրանց հետ: Արտաքնոցը, հոտող դիակը վոչինչ բաներ են նրանց մոտ:

Այդ ժանտահոտ կենդանիների մեջ առենահայտնին եւ ամենից սարսափելին սկունան եւ, վոր ապրում եւ Ամերիկայում։ Արա մարմնի յերկարությունը մոտավորապես կես արշին եւ ունի բավականին յերկար ու թափամազ պոչ, վոր իր յերկարությամբ յետ չի մնում մարմնից։ Գույնը առհասարակ սև եւ, բայց ունի վրան սպիտակ շերտեր, վորոնք սկսում են քթից և աչքերի արանքով անցնելով գնում են մինչև պոչը։ Բացի այդ սպիտակ շերտերից, ունի և բաղմաթիվ սպիտակ բծեր պոչի, պարանոցի և փոքի վրա։

Յերբ վորեւ կենդանի մոտենում եւ նրան վնասելու դիտավորությամբ, նա կանգ եւ առնում, մեջքը ուղցնում, թափամազ պոչը վեր ցցում, յետեր դարձնում դեպի մոտեցող կենդանին և սպասում՝ այդպես դիրք բռնած։ Հենց վոր կենդանին մոտենում եւ, նա իսկույն բաց եւ թողնում նրա վրա մի վերին աստիճանի գարշելի հոտ ունեցող հեղուկ։ Այս հեղուկի հոտը զգում եւ կենդանին թե չե, անմիջապես թողնում փախչում եւ, առանց յետ նայելու։

Ահա թե ինչ եւ պատմում մեկն այդ մասին։

«Յես պատանի եյի, — ասում եւ նա, — յերբ դժբաղդություն ունեցա հանդիպելու սկունաին։ Յեվ այդ ահա թե ինչպես յեղավ։ Արել դեռ նոր եր մայր մտել։ Յես և իմ ընկերներն անցնում ելինք անտառի մոտով։ Հանկարծ մեր առաջ դուրս յեկավ մի սիրուն, գեղեցիկ կենդանի։ Մենք բոլորս առաջին անգամն ելինք տեսնում այդպիսի կենդանի։ Նա վախի և վոչ մի նշան ցույց չտվեց, ընդհակառակը, մեզ տեսավ թե չե, կանգ առավ և սկսեց նայել մեզ այնպիսի բարեկամական մի հայացքով, վոր կարծես թե ուզում եր ասել. «իսձ ել վերցրեք ձեզ հետ»։ Քիչ անցած նա մեջքն ուռեցրեց և գեղեցիկ, թափամազ պոչը վեր ցցեց։ Յես հիացած եյի նրա վրա և առանց յերկար ու բարակ մտածելու իսկույն առաջ վազեցի, վոր բռնեմ։ Յեվ բռնեցի, բայց հանկարծ այդ սիրուն և անմեղ ձե-

վացող կենդանին մի հեղուկ բաց թողեց ուղիղ իմ դեմքին, մի այնպիսի ժանտահոտ հեղուկ, վոր վոչ միայն իսկույն վայր զցեցի նրան, այլև զլուխս վերցրած փախանրա մոտից, թե ինչ տանջանքներ քաշեցի յես այդ հոտից, նկարագրել չեմ կարող»:

Ճանապարհորդները պատմում են, վոր շատ մարդիկ այդ հոտից ուշագնաց են լինում: Շները վայր են ընկնում գետնին և կատաղած թափալվում, կարծես այդ ձեռվ ուզում են ազատվել իրենց տանջող հոտից: Յեթե սկունսի այդ հեղուկը թափվում մի շորի վրա, ապա հոտից ազատվելու միակ միջոցը միայն այրելն է, վորովհետեւ մաքրել վոչ մի կերպ չի հաջողվում:

Ժանտահոտ կենդանիներն ունենալով այդպիսի ուժեղ պաշտպանողական զենք, իրենց շատ ապահով են զգում և յերկյուղի ու վախի վոչ մի նշան ցույց չեն տալիս: Քայլում են դանդաղ, բայց վստահ, արհամարհում են ամեն տեսակի վտանգ: Վազել չգիտեն, նաև մազլցել ու ցատկել: Յեվ դրանց կարիքը նրանք չեն ել զգում. չե՞ վոր նրանք ունեն այնպիսի զենք, վորի համը մի անգամ տեսնողը, յերկրորդ անգամ յերբեք չի հանդգնի մոտենալ: Ժանտահոտներն իրենց այդ զենքը գործ են ածում միայն հարկավոր դեպքում և զուր ու անոգուտ տեղը յերբեք չեն շռայլում:

Սակայն, պետք ե ասենք, վոր ժանտահոտները վերին աստիճանի մաքրասեր կենդանիներ են: Նրանք յերբեք իրենց բունը չեն կեղտոտում, կատվի պես իրենց մորթը լիզելով հարթում են, ուրիշ կերպ ասած, սանտրում են և ամեն անգամ վորեն բան ուտելուց հետո թաթիկներով մաքրում են իրենց դունչը:

Նրանք հեշտությամբ ընտելանում են և յեթե չեն շարանում, յերբեք չեն դիմում իրենց սարսափելի զենքի ոգնության: Ճիշտ ե մեկ-մեկ նրանք մեջքներն ուռեցնում են և պոչերը վեր ցցում, մի բան, վոր, իհարկե, չար դիտա-

վորության նշաններ են, բայց յեթե այդպիսի դեպքերում մարդիկ թողնում, հեռանում են, վտանգը վերանում ե:

ՆԵՐԿԱՏՈՒ ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Յերկու փյունիկեցիներ մեզնից հազարավոր տարիներ առաջ Միջերկրական ծովի ափին նստած՝ հիանում ելին ծովի գեղեցկությամբ։ Նրանց շուրջը վազվզում եր այս ու այն կողմը մի սպիտակ շուն։ Յեվ ահա մի անգամ, իերք այդ շունը մոտենում է նրանց, նրանք նկատում են, վոր նրա դունչը ներկված է գեղեցիկ ծիրանի գույնով։ Այդ բանը շատ և զարմացնում մեր փյունիկեցիներին և նրանք վորոշում են անպատճառ իմանալ, թե շունն ինչից է ներկվել այդ գույնով։ Այդ նպատակով նրանք գընում են այս ու այն կողմը և ուշադրությամբ գիտում ծովի ափին գտնվող առարկաները։ Շատ չանցած տեսնում են նրանք խխունջի նման մի կենդանի, վորի շուրջը ևս ներկված է ծիրանի գույնով։ Մեծ հետաքրքրությամբ բռնում են նրանք այդ կենդանին և դարձնում այս ու այն կողմը և նկատում են, վոր իրենց ձեռքերն ևս ներկվում է ծիրանի գույնով։

Պարզվում է, ինարկե, վոր շան դունչը ներկել է այդ կենդանին, կպել է նրան և այսպիսով ներկել իր դունչը։

Ահա այդ ժամանակվանից հայտնի յե դառնում այդ խխունջը և կոչվում է ծիրանաբեր խխունջ։

Մարդիկ այդ խխունջից սկսում են պատրաստել ծիրանի ներկ և նրանով ներկել իրենց շորերը։ Առաջանում ե մի նոր ճյուղ ներկարարության մեջ, վոր գնալով՝ հետզհետե զարգանում ե։ Ծիրանի գույնը շուտով մեծ հարգու պատիվ է ստանում ամեն տեղ։ Բայց նա բավական



Նկ. 5. Ծիրանաբեր խխունջ

թանգ ներկ եր, Յեղել են ժամանակներ, յերբ մի գրվանքա
ըուրդն այդ գույնով ներկված լինելու պատճառով գը-
նահատվել ե մի քանի հարյուր ոռութիւն: Պարզ ե, ուրեմն, վոր
նա մատչելի շեր կարող լինել ամենքի համար, Յեվ իս-
կապես, հնում միայն իշխանները, զորավարները և պե-
տական բարձր պաշտոնյաններն եյին հազնում ծիրանի գույ-
նով ներկված շորեր: Ավելին: Թագավորները նույնիսկ ո-
րենք են հրատարակում, վորով արգելում են հասարակ
մարդկանց հագնել այդ գույնի շորեր: Յեվ ինչքան մար-
դիկ են մահվան դատապարտվել հենց միայն նրա համար,
վոր դեմ են գնացել այդ անմիտ որենքին: Իզուր չե, իհար-
կե, վոր այդ ժամանակներում իշխանները, զորավարները,
բարձրաստիճան հոգեորականներն ու պաշտոնյանները հա-
սարակ մարդկանցից տարբերվելու համար ծիրանավորներ
եյին համարվում: Նրանք հավատացած եյին, վոր ծիրա-
նաբեր խխունջը ստեղծված ե հենց միայն նրա համար,
վոր աշքի ընկնող մարդիկ ներկեն իրենց շորերը նրանից
պատրաստված ներկով:

Անցնում են, սակայն, հազարավոր տարիներ, մար-
դիկ զտնում են զանազան ներկեր պատրաստելու ավելի
եժան և ավելի հեշտ միջոցներ և շատ բաների նման ծի-
րանաբեր խխունջն ևս կորցնում ե հետզհետե իր նշանա-
կությունն ու արժեքը:

**Մոռացվում ե բոլորովին թագավորների արձակած ո-
րենքը:**

Յեվ այսոր տեսնում ենք, վոր Միջերկրական ծովի
ափերին գտնվող շատ յերկիրներում ծիրանաբեր խխուն-
ջի ներկից ոգտվում են միայն աղքատ ձկնորսները, վո-
րոնք ձուկ վորսալու ժանանակ վորսում են նաև այդ խը-
խունջները և տնային միջոցներով ներկում են նրանց ներ-
կով իրենց հասարակ շորերը: Այդ խեղճերը չգիտեն, թե
այդ անմեղ արարքի համար իրենց պապերը ինչպիսի ծա-
նըր պատիժների յեն յենթարկվել հին ժամանակներում:

Ժամանակների ինչպիսի փոփոխություն:

Հավանական ե, այժմ ել այդ աղքատ ձկնորսներն են հավատացած, զոր ծիրանաբեր խխունջը ստեղծված ե միայն նրա համար, վոր չքավոր մարդիկ ներկեն իրենց շորերը նրա տված ներկով:

Սակայն, ինչ ուզում են, թող կարծեն նրանք. մեզ համար այսոր պարզ ե միանգամայն, վոր ծիրանաբեր խխունջի ներկը վոչ իշխանների ու հարուստների համար ե և վոչ ել խեղճերի ու աղքատների. Այդ ներկը հենց իր՝ ծիրանաբեր խխունջի համար ե:

Յեվ այդ ահա թե ինչու:

Ծիրանաբեր խխունջը մի վերին աստիճանի թույլ ու դանդաղաշարժ կենդանի յե և ունի բազմաթիվ թշնամիներ, վորոնք ամեն կերպ հալածում են նրան: Այդ թշնամիների դեմ պաշտպանվելու համարնա վոչ ուժեղ ատամներ ունի, վոչ սուր ճիրաններ և վոչ ել ամուր յեղջյուրներ: Ճիշտ ե, իր մեջքի վրա ունի նա բավական ամուր մի խեցի, ըայց դա նրան շատ դեպքերում չի կարողանում ոգնել, վորովհետև թշնամիներից շատերն այդ խեցիի վրա ուշադրություն չդարձնելով՝ մեծ ճարպկությամբ հանում են նրան խեցիի միջից և մաքրազարդում: Ահա յուր այդ սառսափելի թշնամիների ձեռքից ազատվելու համար ե ձեռք բերել մեր խխունջը իր ներկը:

Նշանակում ե, ներկը խխունջի համար մի պաշտպանողական զենք ե:

Տեսնենք այժմ թե ինչպես ե զործադրում նա իր այդ զենքը:

Յերբ վորեե թշնամի հարձակվում ե նրա վրա և նա իրեն վտանգավոր դրության մեջ ե զգում, իսկուն բաց ե թողնում իրենից կաթի նման մի հեղուկ և գրանով պըդտորում իր շուրջը յեղած ջուրը: Այդ պղտորված ջրի մեջ նա աննկատելի յե դառնում և ոգտվելով այդ հանգամանքից՝ ախատում ե մի կերպ թագնվել վորեե ապահով տեղ:

Պետք ե ասել, վոր նա այդ միջոցով շատ անգամ հաջողությամբ կարողանում ե ազատվել թշնամիներից:

Ահա հենց այդ կաթի նման հեղուկն ե, վոր առաջ երերում ծիրանի ներկը: Յերբ այդ ներկը քովում ե վորևե առարկայի, սկզբում ներկում ե նրան դեղին, հետո կանաչ, ապա մանիշակի և վերջն ել ծիրանի գույնով: Ծիրանի գույնը վերջնական գույնն ե, վոր այս չի փոխվում:

Բայց միայն ծիրանաբեր խխունջը չե, վոր ոգտվում ե այդ պաշտպանողական միջոցից. կան և ուրիշ շատ կենդանիներ, վոր վտանգավոր ըոպեներին դարձյալ այդ միջոցին են դիմում:

Այդպիսի կենդանիների մեջ աչքի լե ընկնում առանձնապես սեպին, վոր նույնպես ջրալին կենդանի յե և ապրում ե ծովերում, ափերի մոտերքը: Չափազանց զարմանալի կազմություն ունի նա: Տեսեք, նրա գլխի վրա կանտասը շոշափուկներ, վորոնցից ութը կարճ, յերկուսը՝ յերկար: Յերբ վորևե վորս ե տեսնում նա, անմիջապես սեկնում ե իր յերկար շոշափուկները, բռնում վորսը և տալիս կարճ շոշափուկներին. սրանց ներսի յերեսների վրա իրարկողք-կողքի շարված են բազմաթիվ ծծաններ, դրա համար վորսը բռնում են նրանք բավական ամուր կեռպով: Այնուհետև շոշափուկները ծովում են դեպի ներս և վորսը մոտեցնում բերանին: Նշանակում ե, այդ շոշափուկները նրա համար վոչ այլ ինչ են, բայց յեթե ձեռքեր,



Նկ. 6. Սեպիներ

վորոնցով կերակուրը տանում ե դեպի իր բերանը։ Բայց շոշափուկները նրա համար միայն ձեռքերի դեր չեն կատարում, այլ և վոտքերի։ Յերբ հարկավոր ե շարժվել ծովի հատակին, սեպին ըռնում ե իր այդ շոշափուկներով և նրանց վրա գտնվող ծծաններով հատակին գտնվող իրերը և քալում։ Քայլելու ժամանակ նրա գլուխը ուղղված ե լինում ներքև, իսկ մարմինը դեպի վեր։ Գլխի վըրա վոտքեր ունենալու պատճառով կոչվում ե նա գլխոտնյա կենդանի։

Բայց սեպին բացի քայլելուց, զիտի նաև լողալ ջրի մեջ։ Այս գործում ևս դիմում ե նա իր վոտների ոգնության։ Յերբ նա իր վոտները մեկնում ե և ապա ուժով կուչ ածում, մարմինը յետ-յետ ե գնում։

Ինչպես աեսնում եք, այս կենդանին ամեն ինչ թարս ե կատարում։ քայլում ե գլխիվայր և լողում ե յետ-յետ։

Սակայն հարկավոր դեպքում կարողանում ե նա լողալ և դեպի առաջ։ Յեվ այդ ահա թե ինչպես։ Նրա մարմինը զրսից պատած ե ծածկութով, վորի յեղբերը կազմում են նրա համար մի տեսակ լողաթաղանթ։ ահա տատանելով այս լողաթաղանթը կարողանում ե նա լողալ և դեպի առաջ։

Սեպին մի վորոշ գույն չունի։ Մեկ տեսնում ես դեղին ե, մեկ ել հանկարծ շագանակագույն ե դառնում, հետո նորից ստանում ե դեղին և կամ մի այլ գույն։ Նրա վրա շուտ-շուտ յերեսում են զանազան գույնի նշաններ, վորոնք դարձյալ արագ կերպով փոփոխում են իրենց գույնը։

Գույների այս փոփոխությունը խոսք չկա, նրան աննկատելի յե դարձնում և ազատում թշնամիների հարձակումներից։

Բայց այդ ըոլորը դեռ վոչինչ։ աննկատելի դառնալու համար նա ունի մի ավելի լավ միջոց։ Մարմնի յետեի մասում ունի նա մի պարկ՝ լիքը մուգ շագանակագույն թանաքով։ և ահա յերբ վորեն թշնամի համարձակվում ե

նրա վրա, նա առանց յերկար ու բարակ մտածելու, իսկույն բաց ե անում իր այդ պարկը և դատարկում թանաքը. վերջինս խառնվելով ջրի հետ՝ բոլորովին սևացնում ե նրան. Այն ժամանակ սեպին յետ-յետ շարժվելով՝ գըտնում ե մի ապահով վայր և թագնվում այնտեղ, իսկ թըշնամին կորցնելով նրան՝ շփոթված վիճակում հեռանում ե այնտեղից. Պետք ե ասենք, վոր նրա այդ թանաքը բավական ուժեղ ե, մի կաթիլն անգամ սևացնում ի ահագին քանակությամբ ջուր. Մարդիկ նրա այդ թանաքից պատրաստում են մի շագանակագույն ներկ, վոր հայտնի յեսեպի անունով. այս ներկը մեծ գործածություն ունի նըկարչության մեջ. Այդ նույն թանաքից ե պատրաստվում և չինական տուշը, վորի պատրաստությամբ զբաղվում են ահագին թվով մարդիկ:

ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ՎԱԽԵՑՆԵԼ

Հավերի հետ միասին բակում ման եր գալիս աքաղաղը, նա հպարտ եր ու համարձակ, բայց հանկարծ հարեան տնից այդ բակն ե մտնում մի այլ աքաղաղ, նույնպես հպարտ ու համարձակ. Սակայն միենույն բակում, հավերի կողքին յերկու աքաղաղ հաշտ ապրել չեն կարող. Նրանցից մեկն անպատճառ պետք ե զրկվեր իր հպարտությունից. Բայց ո՞վ. այդ վճռում ե միայն կոիվը. Յեվ ահամեր հակառակորդները պատրաստվում են կովի. Նրանք հետզհետե մոտենում են իրար. Քիչ անցած մեր հերոսները սկսում են արդեն կոիվը. Կտուցներն ու վոտները մեծ գործ են կատարում. իրար յետեից հարվածներ ելին, վոր տեղում ելին թե մեկի և թե մյուսի վրա.

Բայց կովի ժամանակ աչքի յեր ընկնում և մի այլ յերեսութ. այդ կովողների փետուրների ձեն ու դասավորությունն եր. Նրանց փետուրներն այլևս սովորական ձև չունեյին. Նրանք ցցվել ելին, մանավանդ պարանոցի վրա

և այնպես, վոր նրանց կարելի յեր մեկ-մեկ հասարել։ Բացի դրանից, կովողների թևերը մարմնից հեռացել եյին և ընկել, իսկ պոչի փետուրներն, ընդհակառակը, վեր ելին բարձրացել։ Շնորհիվ փետուրների այդ ձեմ դասավորության մեր կովողներն ավելի մեծ և ավելի սարսափելի ելին յերեսում։ Այդ տեսքն ընդունած նրանք նայում ելին իրարևարունակում իրենց կոիվը։ Նրանցից լուրաքանչյուրն աշխատում եր վախեցնել իր հակառակորդին վոչ միայն կրտուցի ու վոտների հարվածներով, այլ և իր սարսափելի տեսքով։ Վերջինս նույնպես թուլացնում, ընկնում եր հակառակորդին և առաջ բերում նրա մեջ վախի զգացմունք, իսկ ով վախեցավ, նա չի կարող ի հարկե, կոիվը հաջողությամբ առաջ տանել։

Կոիվը շուտով վերջանում ե. պարտվածն իսկույն հավաքում ե իր փետուրները, թևերը ծալում, պոչը կախ գըցում և փախչում, իսկ հաղթողը, պահպանելով իր փետուրների դասավորությունը՝ հալածում ե նրան և «ծուղրուղու» կանչում։

Աքաղաղից ել ավելի ուժեղ կերպով ե ուղարկում իր փետուրներն ու թևերը հնդկահավը։ Յերբ մոտենում ես նրան, նա անմիջապես փքվում ե, յերկարացնում ու կախում գլխի վրա ունեցած մսային հավելվածները և դլդլացնելով՝ հարձակվում վրադ։ Այդ բոլորն անում ե նա սարսափելի յերեալու համար։

Իսկ թուխսը։ Տեսել եք նրան. նա ման ե գալիս շարունակ իր փետուրները ցցած, վտանգի ժամանակ նա իր փետուրներն ել ավելի յե ուղեցնում։ Այդ վիճակի մեջ նա չափազանց սեծ և սարսափելի յե յերեսում։ Ուրիշ կերպ ել չեր կարող լինել. նա պետք ե պաշտպանի վոչ միայն իրեն, այլ և իր անողնական ճուտիկներին։

Բացի դրանցից, աշխատում են սարսափելի յերեալ և մյուս կենդանիները։

Ահա ձեզ շունը. Յերբ սա ուզում ե հարձակվել վար-

և կենդանու կամ մարդու վրա, տեսեք թե ինչպիսի տեսք
ե ընդունում։ Նա նախ ցցում ե մեջքի, մանավանդ պա-
րանոցի մազերը, պոչը վոլորում, բարձրացնում ե մեջքի
վրա և ապա աշխատում դեմքին տալ սարսափելի տեսք։
Նրա աշքերն այդ ժամանակ կատաղի արտահայտություն
են ստանում և շրթունքները բարձրանում են այնպես,
վոր նրանց արանքից պարզ կերպով յերեսում են ուժեղ ու
սրածայր ժամիքները։ Այդ բոլորը դեռ բավական չեն. հար-
ձակվելու ժամանակ նա սկսում ե հաջել։

Իսկ կատուն. Սա յել կովի ժամանակ ցցում ե մազե-
րը և ցույց տալով իր ճանկերը՝ փշտացնում ե։

Մեր բերած որինակները ցույց են տալիս, վոր կեն-
դանիներն ամեն կերպ աշխատում են մեծ յերեսալ և հենց
այդ նպատակով ել ուռեցնում, ցցում են իրենց մազերը
կամ փետուրները։ Բայց զարմանալին այն ե, վոր աշխա-
տում են մեծ յերեսալ և այն կենդանիները, վորոնք միան-
գամայն զուրկ են թե մազերից և թե փետուրներից։


Յեվ այդ ահա թե ինչպես։

Կան մի շարք բզեզներ, վորոնք վտանգի ժամանակ
վոչ թե աշխատում են փախչել, այլ, ընդհակառակը, կանգ
են առնում և իրենց մարմնին տարորինակ դիրք տալիս։
Այսպես որինակ, նրանք իջեցնում են իրենց զլուխներ,
կպցնում համարյա գետնին, իսկ մարմնի յետեկի մասը ու-
ղիղ վեր բարձրացնում։ Կա մի տեսակ մրջուն, վոր վը-
տանգի ժամանակ վեր ե ցցում միայն փորիկը։

Պատճառը։

Պատճառը պարզ ե. այդ դրության մեջ նրանց մար-
մինն անհամեմատ ավելի մեծ ե յերեսում։ ԶԵ վոր պառ-
կած կամ չորեքթաթ ման յեկող մարդը նույնպես այն
տպափորությունը չի թողնում, ինչ վոր թողնում ե կանգ-
նած մարդը։

Բացի մեծ յերեսալուց, կենդանիներն աշխատում են
ցույց տալ իրենց դիմացինին և իրենց զենքերը. աքաղա-



Դը իր կտուցը, շունն իր ատամները, կատուն իր ճանկերը և այլն:

Միթե մենք ել նույնը չենք անում: Հարձակման ժամանակ մենք ցույց են տալիս մեր այս կամ այն զենքը՝ փայտը, դանակը, ատրճանակը և այլն և կամ մեր բռունցը, վոր մեր բնական զենքն եւ:

Դիմացնի վրա ուժեղ ապավորություն թողնելու համար կենդանիները յերբեմն ստանում են վառ գույներ:

Կան մողեսի տեսակներ, վորոնք վտանգի ժամանակ վոչ միայն ուռչում են, այլև ստանում են մուգ կապույտ գույն: Դիտողությունները ցույց են տվել, վոր թշնամիները հաճախ նրանց այդ գունափոխությունից վախենալով թողնում են նրանց և հեռանում: Հնդկահավի գլխի վրա գտնվող մսային հավելվածները նույնպես գրգռված ժամանանակ վոչ միայն ուռչում են, այլ և ստանում են զանազան վառ գույներ: Նպատակը դարձյալ նույնն ե՝ վախեցնել դիմացինին:

Այդ տեսակետից առանձնապես աչքի յե ընկնում քամելենը: Այս կենդանին ունի մի զարմանալի հատկություն, այն ե արագությամբ փոփոխում ե իր գույնը. մեկ ստանում ե դեղնավուն գույն, մեկ կարմրավուն, մեկ կապտավուն, մեկ գորշավուն և այլն: Նայած թե վորտեղ ե գտնվում, այնտեղի գույնն ել ստանում ե նա. այսպես, որինակ, յեթե կանաչների վրա յե գտնվում, կանաչ գույն ե ստանում, կեղևի վրա, կեղևի գույն և այլն: Այս գունափոխությունը նրան՝ իհարկե, շատ մեծ ոգուտ ե տալիս, վորովհետև ստանալով շրջապատի գույնը՝ նա միանգամայն աննկատելի յե դառնում. մի հանգամանք, վորի շնորհիվ նա շատ անգամ ազատվում ե թշնամիների հարձակումներից և մյուս կողմից ել՝ կարողանում ե առատ վորս անել: Սակայն վտանգի ժամանակ քամելենը միշտ վառ գույն ե ստանում: Նկատել են նաև, վոր վտանգի ժամանակ նրա մարմնի զանազան մասերի վրա առաջա-

նում են պայծառ գույնի նշաններ։ Թե այս նշանները և թե նրա վառ գույները դիմացնի վրա ուժեղ ազդեցություն են ունենում և հաճախ վախեցնում ու փախցնում։

Կան և կենդանիներ, վորոնք պաշտպանվում են թրշնամիներից միայն իրենց սարսափելի տեսքով։

Ոհա ձեզ մի թրթուռ, վորին կարող ենք անվանել աչքավոր թրթուռ, մի չափազանց խեղճ ու վողորմելի կենդանի, վորը, սակայն, հաճախ սարսափ ե ազդում իր թրշնամիների վրա։

Յեվ այդ ահա թե ինչպես,

Նրա մարմինը, ինչպես առհասարակ բոլոր թրթուռների մարմինը, բաղկացած ե ողակներից։ Յեվ ահա այդ ողակների մեջի վրա ունի նա յերկու հատ կլոր սև նշան։ Յերբ վորեւ վտանգ ե սպառնում նրան, նա անմիջապես իր մարմնի առջեի մասը ներս ե քաշում. դրանից այդ մասը հաստանում, ուռչում ե։ Այդ ժամանակ այն ողակը,



Նկ. 7. Թրթուռ սարսափ ազդող վիճակում

վորի վրա գտնվում են սև նշաններն, ընկնում ե հաստացած մասի ամենաուռուցիկ շրջանը, դրա համար ել նշանները նմանվում են աչքերի, վորոնք գտնվում են մի մեծ և հաստ զլիսի վրա։ Այդ վիճակում թրթուռը բավական սարսափելի տեսք ե ունենում և շատերը նրանից վախենում, փախչում են։

Յեվ իսկապես. մի զիտնական, մի անգամ մի այդպիսի թրթուռ դնում ե վանդակի մեջ, վորտեղ կային մի քանի թռչուններ։ Այս թռչունները հենց վոր տեսնում են թրթուռին, իսկույն մոտենում են, վոր ուտեն նրան. Բայց յերբ թրթուռն ուռեցնում ե իր մարմնի առջեի մասը և իր սև մեծ նշանները գարձնում ե դեպի թռչունները, վեր-

ջիններս իսկույն վախեցած փախչում են։ Գիտնականն
այնուհետև այդ թրթուռը տեղափոխում ե մի ալ վաճ-
դակ, վորտեղ հավերի հետ կար և մի հպարտ աքաղաղ:
Թրթուռը վանդակում իսկույն ընդունում ե իր սովորական
պաշտպանողական դիրքը։ Հավերը, նույնպես և աքաղա-
ղը տեսնելով նրան այդ վիճակում՝ սարսափած փախչում
են նրանից։ Սակայն քիչ անցած՝ աքաղաղը սիրտ ե առ-
նում և փոքր ինչ մոտենում ե նրան։ Թրթուռն անշարժ
է։ Այս անշարժությունն աքաղաղին հետզհետե համարձա-
կություն ե ներշնչում և նա կամաց-կամաց ավելի և ա-
վելի յե մոտենում թրթուռին։ Վերջը նա բոլորովին մո-
տենում ե և մեկնում ե իր կտուցը նրան կտցելու հա-
մար, բայց վախը դեռ չի անցել, դրա համար ել աքաղա-
ղըն իր կտուցը յետ ե բաշում։ Թրթուռն անշարժ ե դեռ։
Աքաղաղն այդ փորձը կատարում ե մի քանի անգամ և
վերջը սիրտ անելով՝ կտցում ե թրթուռին։ Հավերը, վո-
րոնք մինչև այդ ուշադիր կերպով դիտում եցին այդ տե-
սարանը, հենց վոր տեսնում են, աքաղաղը կացեց թըր-
թուռին, իրենք ել հարձակվելով՝ ուտում են թրթուռին։

Նույն այդ գիտնականը կատարում ե և մի այլ փորձ։
Նա մի տեղ ճնճղուկների համար կուտ ե թափում և մո-
տը դնում ե մի թրթուռ։ Ճնճղուկները հավաքվում են և
սկսում կուտն ուտել, բայց լեռը նրանցից մեկը շուռ գա-
լով՝ նկատում ե թրթուռին իր պաշտպանողական դիրքի
մեջ, անմիջապես թոշում, հեռանում ե։ Նրան հետեւում
են նաև մյուս բոլոր ճնճղուկները։

Ահա ձեզ և մի թիթեռ, նույնպես խեղճ ու անվտանգ
մի կենդանի։ Հանգիստ ժամանակ նա իր առջեի թևերով
ծածկում և յետեիները և այդ դրության մեջ նմանվում ե
չբացած տերենների, իսկ լերը վորեւ բան նրան անհան-
գըստացնում ե, նա իսկույն բարձրացնում ե իր առջեի թե-
վերը և լայն կերպով բացում յետեիները։ Այս յետեի
թևերից ամեն մեկի վրա ունի նա մի-մի հատ շատ մեծ

աշքանման նշան։ գրա համար ել թևերը բացած ժամանակ թողնում են նա մի մեծ կենդանու գլխի տպավորություն։ Այդ գրության մեջ նա իր թշնամիներից շատերին եւ վախեցնում և փախցնում։



Նկ. 8. Թիթեռը սարսափ ազդող վիճակում

Պաշտպանության նման զենքից ավելի շատ ոգտվում են անապատային կենդանիները, մանուվանդ նրանք, վորոնք զուրկ են վտանգավոր թույներից, ատամներից, ծընոտներից և կամ մարմնական ուժից։

Յեկ այդ միանգամայն հասկանալի յե։

Անապատը մի լայն ու ընդարձակ, հարթ տարածություն ե. այնտեղ կենդանիները հեշտ կերպով թագնվելու հնարավորություն չունեն. այդ պատճառով ել, յերբ կենդանին զուրկ ե վտանգավոր զենքերից, իր գոյությունը պաշտպանելու համար ստիպված դիսում ե այդ միջոցին։

Ահա ձեզ անապատ լին մի մողես, վոր կլոր գուլուխ ունենալու պատճառով կոչվում ե կլորագլուխ մողես, դարձյալ մի վերին աստիճանի խեղճ ու թշվառ կենդանի։ Բայց արի տես, վոր այդ կենդանին սարսափ ե ազդում շատ ու շատ կենդանիների վրա։ Վտանգի ժամանակ նա ստանում ե շափազանց ահարկու տեսք։

Յեվ այդ ահա թե ինչպես:

Հենց վոր վորեե ոեկը անհանգստացնում ե նրան, նա փոխանակ փախչելու, կանգնում ե տեղը, բարձրացնում վոտները, բարձրացնում ե նաև պոշը, պարուրածե վոլորում, ցցում դեպի վեր և ապա լայն կերպով բացում բերանը. Բերանի յերկու անկյուններում ունի նա մորթու մեծ ծալվածքներ. Վտանգի ժամանակ նա բացում ե նաև այդ ծալվածքները դրանից նրա բերանի բացվածքը չափազանց մեծանում ե և ստանում վերին աստիճանի սարսափելի տեսք. Ծալվածքների ներսի յերեսն ունի կարմիր գույն. կարմիր գույն ունի և նրա բերանի ներսը Յեվ այդ ե պատճառը, վոր ծալվածքները բացած ժամանակ թվում ե թե ամ-

բողջ բացվածքը բերան
ե. Արդպես բերանը բա-
ցած և աչքերը հառած
սկսում ե նա մոտենալ
իր թշնամուն:

Բայց այդ դեռ բա-
վական չե. ավելի սար-
սափելի յերեալու համար
նա սկսում ե և փշշաց-
նել. Նշանակում ե, նա
ուզում ե ազդել վոչ մի-
այն տեսողության, այլ և լսողության վրա. Յեթե այդ ել
չի ոգնում, այդ ժամանակ սկսում ե հարձակվել թշնամու
վրա, թեպետ կծելու համար նա հարմարավոր ատամներ
չունի. Այս ձեռք կլորագլուխ մողեսը վերջը կարողանում
է վախեցնել իր թշնամուն և փախցնել:

Վոր այդ մողեսի բերանի անկյունում գտնող ծալ-
վածքները միայն ստրսափ ազդելու համար են, այդ պարզ
յերեալում ե հենց նրանցից, վոր վորս անելու ժամանակ նա
դրանց յերբեք չի բացում:



Նկ. 9. Կլորգլուխ մողեսը սարսափ ազդող
վիճակում

Կա և մի առ տեսակի մողես, վոր վախեցնելու համար ունի ել ավելի լավ հարմարություն։ Նա իր պարանոցի շուրջն ունի փողպատի նման մի ծալվածք։ Յերբ պետք է սարսափ ազդել, բարձրացնում ե նա այդ ծալվածքը, և գլխի շուրջն առաջ բերում մի մեծ վահան։ Յեվ վորով հետև այդ վահանն ունի աչքի ընկնող գույներ, դրա համար ել դիմացնի վրա թողնում ե չափազանց ուժեղ տըպավորություն։

ՄԵՐ ԲԵՐԱԾ բոլոր որինակները ցուց են տալիս, վոր սարսափ ազդող միջոցները շատ տարածված են կենդանական աշխարհում և պետք է ասենք, վոր շատ կենդանիներ միայն այդ միջոցներով են պահում իրենց գոյությունը։

Այժմ մի քանի խոսք ել այն մասին, թե կենդանիներն ինչպես են գործադրում իրենց այդ միջոցները—հասկանալով, թե առանց հասկանալու։

Հայտնի յե ամենքին. վոր վախը կենդանու մեջ առաջանում ե ինքն իրեն. կենդանին վախենում ե սրանից կամ նրանից առանց իրեն հաշիվ տալու։ Ուրիշ կերպ ասած, վախը մի բնազդ ե։ Շնորհիվ այդ բնազդի կենդանին հենց վոր վտանգ ե նկատում, իսկույն աշխատում ե իր գլխի ճարը տեսնել։ Նշանակում ե, վոր վախն ոգտակար յերևութ ե։

Վախի նման ե և վախեցնելը. սա ևս յերեան ե գալիս առանց մտածելու, կամ ինչպես ասում են, բնազդաբար։ Կենդանին հարկավոր դեպքում դիմում ե այն բոլոր միջոցներին, վորոնք կարող են դիմացինին վախեցնել։

ԴԻՄԱԿԱՎՈՐՈՒՄՆ

Ի՞նչքան շատ և ի՞նչքան բազմազան են թիթեռները Ամերիկայի տաք յերկիրներում. կարելի յե ասել, ողնայնտեղ իսկապես լիքն ե նրանցով։ Յեվ ինչ գեղեցիկ

պատկեր են առաջ բերում նրանք որվա տաք ժամանակը. անթիվ, անհամար թիթեռներ հազար ու մի նազանքով բարձրանում են ողի վերին շերտերը և մեկ ել նույնպիսի նազանքով ցած իջնում. հաճախ նրանք նստում են գույնզգույն մազիկների վրա, փոքր ինչ հանգստանում կամ հազեցնում իրենց քաղցը և նորից նետվում ողի մեջ: Յերբ դիտում ես նրանց, այն տպավորությունն ես ստանում, թե այդ թիթեռներից քաղղավոր արարածներ չկան այս աշխարհում:

Բայց արդպես թվում ե միայն. ուշադիր դիտողությունը ցույց ե տալիս, վոր նրանք արնքան ել նախանձելի չեն:

Յեվ իսկապես. ահա մի թոշուն թևերն արագ թափ տալով՝ սլանում ե ողի մեջ, նա այդ թիթեռների կատաղի թշնամին ե, մոտենալով վորևե թիթեռի՝ նա բերանը լայն բացած հարձակվում ե նրա վրա, բռնում, արագ կերպով կլանում նրա մարմնի փափուկ մասերը, իսկ կոշտ թևերը փշուր-փշուր անելով՝ ցած թափում: Այնուհետև նա նույնպիսի արագությամբ հարձակվում ե յերկրորդ, ապա յերրորդ թիթեռի վրա և արդպես շարունակ:

Յեվ ինչքան շատ են այդ անգութ թոշունները: Ահա ձեզ և մի մեծ բզեզ, վոր բզզալով՝ թոշում ե այս ու այն կողմը: Նայում ես գետնին, ծառերի ճյուղերին ու բներին և տեսնում ես անթիվ, անհամար մողեսներ, գորտեր, դոդոշներ, վորքան բոլորն ել պլըշիկ աչքերով հետեւում են թիթեռներին և յերբ սրանք նստում են վորևե տեղ, փոքր ինչ հանգստանալու, իսկույն վրա յեն հարձակվում, բռնում ու կլանում:

Մարդ դիտելով այդ տեսարանը՝ սկսում ե խղճալ թիթեռներին: Սակայն, բոլոր թիթեռներն այդպես թույլ ու խղճալի արարածներ չեն: Ահա ձեզ թիթեռների մի մեծ խումբ, ահա և յերկրորդը, յերրորդը, տեսեք ինչ մեծ ու փափլիկ թիթեռներ են և ինչքան գեղեցիկ: Ինչ

գույներ ասես, վոր չունեն նրանք իրենց վրա, կարմիր, դեղին, սև, սպիտակ, մանուշակի գույն, մի խոսքով բոլոր գույները և բոլորը դասավորված նուրբ ճաշակով։ Զարմանալին այն ե, վոր այդ թիթեռների թևերի յերկու յերեսն ել ունեն նման վառ գույներ, մինչդեռ մնացած թիթեռների թևերի միայն մի յերեսն ե ունենում վառ գույներ։ Ահա այդ թիթեռները հանգիստ ու անվրդով մոտենում են մի թռչունի։ Ինչ խելագարներն են, մտածում են, և սպասում են, վոր ահա թռչունը պետք ե հարձակվի նրանց վրա և ազահությամբ կլանի նրանց մարմնի փափլիկ մասերը։ Բայց չե. թռչունն այնպես ե ձևացնում, կարծես թե նրանց բոլորովին չե տեսնում։ Ավելին. նա նույնիսկ աշխատում ե փախչել, հեռանալ նրանցից։ Զարմանում ես, իհարկե, բայց յերբ բոնում ես նրանցից մեկն ու մեկին, իսկույն հասկանում ես պատճառը։ Բանն այն ե. վոր դրսից գեղեցիկ այդ թիթեռներն արձակում են իրենցից վերին աստիճանի զզվելի հոտ, այնքան զզվելի, վոր չես կարողանում պահել ձեռքումդ և իսկույն զզվանքով դեն ես շպրտում։ Կասկած կա միթե, վոր այդպիսի հոտ ունեցող թիթեռի միսն ել մի բան չի կարող լինել։ Յեվ իրոք. նրա միսն ես զզվելի յե այնպես, ինչպես և արձակած հոտը։

Ունենալով զզվելի հոտ և անախորժ միս՝ այդ թիթեռներն իրենց շատ ապահով են զգում։ Յեվ այդ ե պատճառը, վոր թռչում են շատ դանդաղ։ Նրանք իրենց դանդաղ թռիչքով և աչքի լնկնող գույներով կարծես ուզում են հասկացնել բոլոր թռչուններին, թե հեռու կացեք ինձնից, յես ուտելու բան չունեմ ձեզ համար։

Բայց յեթե պատահում ե, վոր վորեե անփորձ թռչուն գրավվելով նրա մեծությունից ու գեղեցիկ գույներից՝ հարձակվում ե նրա վրա և բոնում, տեսնում ես, վոր նա իսկույն կտուցից կրկին վայր ե զցում և գլուխը զզվանքով

շարժում: Մի յերկու աչղպիսի փորձից հետո, պարզ է, թոշունը խրատվում է և այլես յերբեք չի մոտենում նրանց: Այդ թիթեռները կոչվում են հելիկոնիդներ:

Յեթե բոնենք այս թիթեռներից մի քանի տասնյակ հատ, կտեսնենք, վոր նրանց մեջ պատահում են և այնպիսիները, վոր հոտ չեն արձակում: Ուշադրությամբ դիտելով՝ կնկատենք, վոր այդ թիթեռները հոտ արձակողներից շատ բաներով չեն տարբերվում: Նրանք ունեն բոլորովին տարբեր գլուխութեածք, կուրծք, վոտքեր և շոշափուկներ կամ բողկուկներ:

Յեվ այդ միանգամայն հասկանալի լե: Դրանք հելիկոնիդներ չեն, այլ բոլորովին այլ տեսակի թիթեռներ, վորոնց ասում են պիերիդներ:

Մի գիտնական ասում է, վոր հելիկոնիդների ու այդ թիթեռների մեջ այնքան տարբերություն կա, ինչքան արջի ու գոմեշի մեջ: Սակայն, չնայած այդ տարբերություններին՝ այդ թիթեռներն իրենց արտաքինով բոլորովին նման են հելիկոնիդներին. նման են թե մեծությամբ և թե գույներով: Գույների նմանությունն արտահայտվում է նույնիսկ ամենաաննշան բծերի ու կետերի մեջ: Նմանությունն այնքան մեծ է, վոր մինչև անգամ ամենափոքր անագած աշքը դրժարությամբ է նրանց մեջ տարբերություններ գտնում:



Հելիկոնիդ (վերեռում) և պիերիդ (ներքեռում)

վարությամբ է նրանց մեջ տարբերություններ գտնում: Բայց այդ դեռ բավական չե. Նրանք նմանվում են հելիկոնիդների և իրենց թոշելու յեղանակով. Նրանք ևս թոշում են դանդաղ և մեծ թևերը ծուլ-ծուլ թափ տալով:

Յեվ վոր գլխավորն ե, շարուսակ լինում են հելիկոնիդների հետ, թեպետ վարում են բոլորովին այլ կյանք:

Հարց ե ծագում, ի՞նչու համար են այս նմանությունները:

Պատճառը հասկանալի յէ: Այս թիթեռներն ունեն բավական համեղ միս, վորով և զրգում են իրենց բազմաթիվ թշնամիների ախորժակը: Ի՞նչպես ազատվել նրանցից: Յեվ ահա գտել են նրանք պաշտպանվելու ամենալավ միջոցը: Նմանվել հելիկոնիդներին, - այդ ամենաապահով թիթեռներին, ուրիշ խոսքով հագնել նրանց դիմակը և այդպիսով խաբել թշնամիներին:

Դիմակավորման որինակներ տեսնում ենք նաև ուրիշ յերկիրների թիթեռների մեջ:

Հաճախ դիմակավորվում ե պաշտպանության կարու թիթեռի միայն եղը: Յեվ պարզ ե, թե ինչու: Եղն ավելի շատ հոգսեր ունի և բացի դրանից, տեսակի պահպանության գործում ավելի մեծ դեր ե կատարում, քան արուն: Նա յե, վոր ձու յե ածում և նոր սերունդ առաջ բերում: Յեթե մի եգ, վոր իր մեջ հարյուրավոր ձվեր ե պարունակում, զոհ ե գնում թշնամիներին, պարզ ե, նրա հետ վոչնչանում են և հարյուրավոր մատաղ կյանքեր: Ահա թե ինչու շատ անգամ դիմակավորվում ե միայն եղը, իսկ արուն մնում յե իր անպաշտպան դրության մեջ:

Բայց այդ դեռ վոչինչ:

Դիմակավորվում են յերբեմն և այնպիսի թիթեռներ, վորոնք ունեն միանգամայն զզվելի համ ունեցող միս, ուրեմն և կարող են ապահովված համարվել:

Այս յերեսություն սկզբում անհասկանալի յէ թվում, բայց, յերբ փոքր ինչ խորն ենք մտածում, տեսնում ենք, վոր թիթեռներն այդպես վարվելու համար ունեն լուրջ պատճառներ:

Բանն այն ե, վոր թոշունները, թիթեռների այդ գլխավոր թշնամիները պետքական և անպետք թիթեռները

զանագանում են միմյանցից միայն մի վորոշ փորձառությունից հետո։ Ամեն մի թոշուն՝ իմանալու համար թե այս կամ այն թիթեռն ինչպիսի համարնի, ստիպված ե փորձեր կատարել։ Դրա համար ել անախորժ միս ունեցող թիթեռի համար շատ ձեռնտու յե, յերբ նա ստանում ե վորեե շատ հալտնի և տարածված թիթեռի դիմակը։

Բացատրենք մեր միտքը թվերով։

Յենթաղրենք վորեե տեղ ապրում են միասին անախորժ միս ունեցող յերկու տեսակի թիթեռ, մի տեսակից 50.000 հատ, մյուսից՝ 500։ Յեթե այդ թիթեռները տարբեր ձե, գույն և մեծություն ունենան, թոշունները նրանց համի մասին զաղափար կազմելու համար պետք ե փշացնեն վորոշ թվով թիթեռներ։ Յեվ յենթաղրենք դրա համար թոշունները փշացնում են յուրաքանչյուր տեսակից 303 հատ, Այս թիվը, ճիշտ ե, 50,000 հատ թիթեռ ունեցող տեսակի համար մի առանձին նշանակություն չունի, բայց մյուս տեսակի համար դա կիներ չափազանց մեծ կորուստ։ Իսկ յեթե այս տեսակը ստանար առաջինի դիմակը, այն ժամանակ թոշունները յերկու տեսակից կփշացնելին ընդամենը միայն 303 հատ։ Վորից առաջին տեսակին բաժին կընկներ 300 հատ, իսկ յերկրորդ տեսակին՝ միայն 3, վոր մի աննշան թիվ եւ Ոգուտը, պարզ ե, իհարկե։ Ահա թե ինչու յերբեմն անախորժ միս ունեցող թիթեռներն իս դիմում են դիմակավորման։

Բայց չկարծեք թե միայն թիթեռներն են դիմակավորվում։ Դիմակավորված են հաճախ և այլ տեսակի կենդանիներ։ Հենց այնտեղ, վորտեղ ապրում են մեր հելիկոնիդները, տեսնում ենք մի շարք բզեզներ, վորոնք միանգամայն նմանվում են մեղուներին և պիծակներին։ Բացի բզեզներից կան և մի բանի տեսակի անմեղ ճանձեր, վորոնք իրենց արտաքինով նման են բոլորովին մեղուներին։

Մի գիտնական պատմում ե, վոր մի յերեխա իր հա-

վաքածվի համար ցանկանալով բռնել մի այլպիսի ճանձ,
սխալմամբ բռնում ե մի մեղու, վոր նրա ձեռքը խալթում
եւ Ահա այս յերեխալի նման շատ հաճախ պատժվում են



Նկ. 11. Ճանձ (Ճախ կողմում) և մեղու (աջ կողմում)

նաև միջատակեր կենդանիները, դրա համար ել նրանք հետազայում զգուշանում են նման վորս անելուց:



Նկ. 12. Թունավոր և թունազուրկ ոձեր
վոր ամենափորձված մարդիկ անդամ դժվարանում են նրանց
տարբերել իրարից:

Դիմակավորվում են յերեմին և բարձր կարգի կենդանիները: Ամերիկայում ապրում են մի տեսակի թունավոր ոձեր, վորոնք աչքի յեն ընկնում իրենց խայտաբղետ գույներով. Նրանց վրա կարմիր և սև ողակավոր շերտերը կանոնավոր կերպով հաջորդում են միմյանց՝ դիմից սկսած մինչև պոշի ծալը: Յեզ ամեն մի սև շերտի վրա լինում են յերկու կամ յերեք հատ ել բաց դեղնավուն գույնի բարակ շերտեր: Ահա այս թունավոր ոձերի կողքին ապրում են և միանգամայն թունազուրկ ու անմեղ ոձեր, բայց իրենց արտաքինով այնքան նման թունավորներին,

Դիմակավորներ կան և թռչունների մեջ. այդ կողմից առանձնապես աշքի յէ ընկնում կկուն. այդ զարմանալի թռչունը, վոր միշտ իր ձվերն ածում ե ուրիշների ըներում. Նա մի տեղ նմանում է բազելին մի այլ տեղ մի այլ զիշատիչ թռչունի և նմանվում է թե գույնով և թե թռչելու յեղանակով:



Նկ. 13. Կկու

Այս բոլոր որինակները ցույց են տալիս, վոր կենդանիները դիմակավորվում են մի վորոշ նպատակով, այն ե նմանվելով ապահով ու ուժեղ կենդանիներին, պաշտպանվում են իրենց հալածող բազմաթիվ թշնամիներից:

Սակայն պատահում են և դեպքեր, յերբ կենդանիները դիմակ են ստանում բոլորովին այլ նպատակներով: Այսպես որինակ, Հարավայում Ամերիկայում ապրում են մի տեսակ ճանճեր, վորոնք իրենց ձվերն ածում են մեղուների փեթակներում, վորովհետեւ այդ ձվերից դուրս յեկող թրթուռները կերակրվում են մեղուների թրթուռներով: Բայց ինչպես մտնեն փեթակները, վոր մեղուները չկարողանան նկատել

Նրանց: Յեվ նրանք գտել են միջոցը. ստացել են մեղուների կերպարանք, ուրիշ կերպ ասած՝ դիմակավորվել են: Յեվ այդ ե պատճառը, վոր, յերբ նրանք մտնում են փեթակը, մեղուները յերբեք չեն կարծում, թե մի զարհուրելի թշնամի յէ ներս մտնում:

Կան և մեղուներ, վորոնք յերբեք սեփական փեթակ շեն շինում, դրա համար ել յերբ պետք ե ձու ածել, նրանք մտնում են ուրիշ մեղուների փեթակներ և այնտեղ ձու ածում: Նրանց ձվերից դուրս յեկած թրթուների խնամքը տանում են, իհարկե, փեթակների տեր մեղուները: Նշանակում ե, այդ մեղուները վարվում են ճիշտ այնպես, ինչպես կկունները, և այդ ե պատճառը, վոր այդ մեղուներին ասում են «մեղու-կկուներ»: Սրանք ազատ ու անվտանգ կերպով փեթակներ մտնելու համար, ստացել են, այն մեղուների կերպարանքը, վորոնց փեթակում ածում են իրենց ձվերը:

Ահա և մի այլ որինակ:

Կա մի տեսակ սարդ, վոր կերակրվում ե գլխավորապես մրջունների հյութով: Ինչպես անի այդ սարդը, վոր կարողանա ապրել մրջունների հետ կողք-կողքի և միևնույն ժամանակ բոլորովին աննկատելի մնա: Ամենալավ միջոցն, իհարկե, դիմակավորվելն ե. և նա դիմել ե այդ միջոցին. Նա ստացել ե միանգամայն մրջունի տեսք: Յեվ ահա զառան մորթի հագած այս դաշըլ հեշտությամբ ու աննկատելի կերպով մտնում ե մրջնոցը և այդտեղ մեկ-մեկ բոնում մրջուններին ու ծծում նրանց հյութը:

Նման խարդախության ե դիմում և մի փոքրիկ գիշատիչ կենդանի, վոր իր մեծությամբ, տեսքով և մանավանդ իր թագամազ ու յերկար պոչով նման ե միանգամայն սկլուսին, պտուղներով կերակրվող այդ անմեղ կենդանուն: Ունենալով սկլուսի դիմակը՝ նա հեշտությամբ մոտենում ե փոքրիկ թռչուններին և բոնում նրանց, վորոնք

նրան սկզբունքի տեղ դնելով յերբեք չեն մտածում փախչելու
մասին:

Այս բոլորը ցուց են տալիս, վոր դիմակավորումն
ահագին դեր ե կատարում կենդանիների կյանքում. մի
քանիսը նրա միջոցով պաշտպանվում են իրենց թշնամի-
ներից, իսկ մյուսները ողափում են նրանից իրենց զոհերին
ավելի հեշտությամբ խափելու ու մոլորեցնելու համար:

Յեթե ուզենաք, յերկու տեսակի դիմակավորման
որինակներ կարող եք գտնել և մարդկանց մեջ:

ԼԱՎ Ե ՄԻ ԱՆԴԱՄԻՑ ԶՐԿՎԵԼ, ՔԱՆ ԹԵ ԿՅԱՆՔԻՑ

Քարակույտի վրա ապրում եին բազմաթիվ մողեսներ:
Արևոտ որերին նրանք դուրս են դալիս իրենց բներից,
արագ կերպով մազլցում քարերի վրա և իրենց
համար վորս անում: Վորսում են ճանձեր, բզեզներ, թի-
թեռներ և սրանց նման կենդանիներ: Հենց վոր վորսը
նկատում են, մոտենում են նրան և ճարպիկ կերպով
ցատկում գործելով՝ բռնում ու կլանում: Շարժվելու ժա-
մանակ բանեցնում են նրանք իրենց վոտքերը՝ յերկար
մարմինը, մանավանդ պոչը: Վերջիններս դալարում են
նրանք այնպես, ինչպես ոձը. տարբերությունը միայն
այն է, վոր ոձը վոտքեր չունի և շարժվում է միայն իր
յերկարուկ մարմինը դալարելով:

Արևոտ որերին նրանց տրամադրությունը չափազանց
բարձրանում է. նրանք այդ ժամանակ վոչ միայն վորս են
անում, այլ և տեսակ-տեսակ խաղեր են սարքում, վազ-
վզում այս ու այն կողմը, բարձրանում ծառերը, ցած-
իչնում, ցատկում: Բայց հենց այդպիսի որերին նրանց
գլխին ամեն տեսակի փորձանք ե դալիս: Նրանց բազմա-
թիվ թշնամիները կարծես թե դրան են սպասում: Յեկ
իսկապես. այդ ժամանակ բավական թվով մողեսներ են
վոչնչանում: Բայց ինչու խղճանք դրանց, չե վոր նրանք

ել ամեն որ ահագին թվով ուրիշ կենդանիներ են վոչնչացնում:

Մի զեղեցիկ արևոտ որ յես դիտում ելի այդ քարակույտի մողեսների խաղը, մեկ ել հանկարծ տեսա մի զգույշ ազռավ մոտնեում ե նրանց: Ուշադրությամբ ըս-



Նկ. 14. Մողես

կսեցի հետևել նրան: Նա մոտենում եր մի մողեսի: Մողեսն անշարժ եր, ինչպես յերեսում ե, նա դեռ չեր նկատել ազռավին: Յերբ ազռավը բավական մոտեցավ, մողեսը նկատեց նրան և սկսեց փախչել: Ազռավը նրա հետևեց: Մողեսը մոտեցավ մի քարաճեղքի և պետք ե մտներ այնտեղ, հանկարծ ազռավը բռնեց նրա պոչից, թե հետո ինչ պատահեց. Հիմացա, միայն այն տեսա, վոր մողեսի պոչը շարժվում եր ազռավի բերանում:

Ինչպես յերեսում ե, մողեսը պոչը տվել եր ազռավին և ազատել գլուխը: Յեվ այսպես ել յեղել ե: Հենց վոր

թշնամին բոնել ե նրա պոչից, նա իսկույն զոհել ե պոչը և փախել.

Պոչը մողեսի կյանքում բավական մեծ դեր ե կատարում. նրա գալարումներով մողեսն արագացնում ե իր շարժումը և գետնին զարկելով մեծացնում ցատկումները. Նշանակում ե, առանց պոչի մողեսն իրեն շատ վատ պիտի զգա: Անշուշտ: Սակայն մողեսի բաղդից այդ դրությունը յերկար չի շարունակվում, անցնում ե մի վորոշ ժամանակ և մեր պոչատ մողեսը նորից պոչավոր ե դառնում. կտրված պոչի տեղ, աճում, մեծանում ե մի նոր պոչ:

Կյանքն ազատելու հրաշալի միջոց: Յերբ թշնամին արդեն բոնել ե պոչից և պետք ե շուտով մաքրազարդի կորցնելով միայն մի անդամը՝ փրկում ե նա իրեն, և այդ դեռ վոչինչ, այդ կորցրած անդամն ել շուտով աճում, զարգանում ե:

Բայց ի՞նչպես և վորտեղից ե կտրվում մողեսի պոչը: Բոլոր դիտողությունները ցույց են տվել, վոր մողեսի պոչը կտրվում ե իր հիմքի մոտից և միշտ միևնույն տեղից: Այդտեղ զտնվող պոչի վողը մեջտեղից բաժանված է յերկու մասի, իսկ նրա յերես պատած մկանն ել այնպիսի կազմություն ունի. վոր կարող ե ուժեղ կերպով կծկվել: Յերբ պոչի վորեե մասը գրգիռ ե ստանում, որինակ, յերբ թշնամին կծում ե նրա պոչի ծայրը, այն ժամանակ այդ մկանն ուժեղ կերպով կծկվում ե, վորից և պոչը կտրվում ե և այնպես, վոր մեր հիշած վողի մի մասը մնում ե կտրված պոչի վրա, իսկ մյուս կեսը՝ մարմնի վրա: Յերբ թշնամին կծում ե այն մասից, վոր զտնվում ե մարմնի և վերոհիշյալ վողի միջև, դարձյալ պոչը նույն տեղից ե կտրվում: Մի բան, վոր մողեսի համար միանդամայն անոգուտ ե անցնում:

Այժմ տեսնենք, թե ի՞նչպես ե կտրվում պոչը: Պոչը կտրվելու գործում մողեսի կամքը և վոչ մի նշանակություն չունի: Այդտեղ դեր ե կատարում միայն ցավը:

Առանց ցավ պատճառելու, յեթե կամենաք կտրել մողեսի պոչը, շատ մեծ դժվարության կհանդիպեք և յեթե կտրեք ել, կտեսնեք, վոր նա իր սովորական տեղից չի կտրվել:

Մի գիտնական այդ հաստատելու համար կատարել ե հետեւալ փորձը: Բոնել ե մի մողես, սոսնձանցութով կպցրել նրա պոչին մի լաթի կտոր և վերջինս ամուր կերպով կապել մի փայտից: Մողեսը շատ ե աշխատել սլոկ դալ լաթից, բայց միանգամայն անոգուտ: Գիտնականը վերջը բոնել ե մողեսի իրանից, և ուժեղ կերպով ձգել, այդ ժամանակ կտրվել ե պոչը, բայց վոչ թե հիմքից այլ ծայրից: Նույն գիտնականը կատարել ե և մի այլ փորձ: Վերցրել ե մի մողես, նույն ձեռվ կապել փայտից, բայց այս անգամ փոխանակ ձգելու, ունելիքի ծայրով բոնել ե պոչի ծայրը և պինդ հուզ տվել: Այդ ժամանակ պոչն իսկույն պոկվել ե սովորական տեղից:

Այս փորձերը պարզ կերպով ցույց են տալիս, վոր մողեսի պոչը կտրվում ե միայն ցավի ազդեցության տակ և վոր այդ գործողությունը կատարվում ե միանգամայն անկախ մողեսի կամքից:

Ինչ ձեռվ և ինչ ազդեցության տակ ել ուզում ե, թող կտրվի մողեսի պոչը, այդ միանույն ե: Մի բան պարզ ե միանգամայն, վոր մողեսը շատ դեպքերում պոչի այդ հատկության շնորհիվ ազատում ե իրան մեծ վտանգներից:


Բայց միայն մողեսը չի, վոր ունի պաշտպանության արգալիսի զենք: Կան ուրիշ կենդանիներ ևս, վոր դարձյալ նույն միջոցով են պաշտպանում իրենց:

Ահա ձեզ խեցգետինը: Սա ունի մի զույգ ուժեղ մկրատներ: Յեթե խեցգետին վորսալու ժամանակ բոնեք ակրատների ծայրից և բաշեք, կտեսնեք, վոր ձեր այդ մկրատների ծայրից և բաշեք, կտեսնեք, վոր ձեր ձեռքին կմնան միայն մկրատները, իսկ խեցգետինը

ազատվելով ձեզանից՝ կփախչի և կմտնի մի ազահով անկյուն:

Նույն ձևով կտրվում են սակ խեչափառի մկրատները:

Թե խեցգետնի և թե խեչափառի մկրատները կտվում են իրենց հիմքից և կտրվելուց հետո դարձյալ նորերն են դուրս գալիս: Նոր մկրատը հնից տարբերվում է միայն իր մեծությամբ. նա միշտ մի քիչ ավելի փոքր ելինում, քան հինը:



Նկ. 15. Խեցգետին

Ահա ձեզ և ծովաստղը. սա ունի հնգաթև աստղի ձև, ապրում ե ծովերում, շարժվում է իր թևերի վրա յեղած ծծաններով և սնվում ե դանդաղաշարժ կենդանիներով և գեղերով: Մնացած կենդանիների նստան նա ևս ունի թշնամիներ. և ահա, յերբ այս թշնամիները հարձակվելով նրա վրա, բռնում են նրա թևերից մեկը, նա իր այդ թևը բաժին է թողնում իր թշնամուն և հեռանում: Թշնամին դրադիվելով կտրված թևով, այլևս չի ճետապնդում նրան և նա հանգամանքից ոդտվելով՝ փախչում, թագնվում է վորեւ ապահով վայրում: Շատ չանցած, կտրված թևի տեղ դուրս ե գալիս նորը և ծովաստղը մոռանում է միանգամայն դժբաղդ պատահը:

Նույն ձևով հեշտությամբ տալիս ե կանաչ մորեխն եր վոտները։ Յերբ ցանկանում եք բռնել նրան, և բռնում եք նրա յերկար վոտներից մեկը, անմիջապես զոհում ե նա իր այդ վոտը և հեռանում։ Սակայն կանաչ մորեխի այս զոհաբերությունը շատ ավելի թանգ ե նստում, քան





Նկ. 16. Ծովաստղեր

մյուս կենդանիներինը։ Յեկ այդ ահա թե ինչու։ Մյուս կենդանիները կորցնելով իրենց մարմնի այս կամ այն մասը՝ վորոշ ժամանակից հետո նորից ձեռք են բերում այն, իսկ կանաչ մորեխը մի անգամ կորցնելով իր վոտը, մնում ե իր ամբողջ կյանքում առանց վոտի, խեղանդամ վիճակում։

Ի՞նչ ուզում ե, թող լինի, խեղանդամ վիճակում ապրելն ավելի ցանկանալի յե, քան կյանքից զրկվելը։ Շատ մարդիկ ել կյանքը փրկելու համար հաճախ կարել են տալիս հիվանդ վոտը կամ ձեռքը։

Այս բոլորից տեսնում ենք, վոր կենդանական աշխարհում մարմնի այս կամ այն մասը զոհելու միջոցով կյանքը փրկելը բավական տարածված յերեսույթ ե ստորին կարգի կենդանիների մեջ։





ՑԱՆԿ

	ԵՎ
1. Հոտը իբրև զենք	3
2. Ներկատու կենդանիներ	10
3. Աշխատում են վախեցնել	15
4. Դիմակավորումն	23
5. Լավ ե սի անդամից զրկվել, քան կյանքից	32



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0010521

A — 16158

«ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՍԵՐԻԱՅԻՑ» ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

1.	Գաբրիելյան Ռ.	— Միջատակեր ըույսեր	.	.	15	կ.
2.	Լեբեգեվ Ի. Կ.	— Ինչպես և առաջացել լիրկերը	.	.	30	»
3.	Գաբրիելյան Ռ.	— Ոլկիանի թագավորը	.	.	20	»
6.	Սարգսյան Վ.	— Զարմանալի զենքեր	.	.	35	»
7.	»	— Ճագարամուկը, բղեղների յետեից	.	.	25	»
10.	»	— Մողեսների աշխարհում	.	.	25	»

ՀՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ ՆՈՒՅՆ ՍԵՐԻԱՅԻ

4.	Սարգսյան Վ.	— Կենդանի ճրադներ
8.	Կարենցեվ	— Ելեքտրիֆիկացիայի պիոներ եղիսոն
9.	Պիմենովա	— Ողառարիկով դեսլի ընեռ

Դիմել Պետրասի բոլոր գրախանութերին
յև բաժանմունքներին



ԳԻՆՆ Ե 35 ԿՈՊ.

35 կ.